


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ԵԿԵՂԵՑԻՆ ՊԱՇՏՈՆԸ**

Հայց. Առաք. Եկեղեցիին՝ հայութեան մատուցած անդնահատելի ծառայութիւնները կը պարտադրեն ամէն հայը որ յարգանքով յիշէ անոր պատկառելի անունը և զուրկութեան քով վերաբերուի անոր հետ: Հայը՝ իր փոթորկալից կեանքին է՛ն յուսահատական փայրկեաններուն՝ իր եկեղեցիին՝ ծոցը միայն կրցած է անդորր տալուէն մը զանեղ. հայը՝ զարեւր շարունակ իր զաւգափարսապաշտ միտքին և տեսլապաշտ հոգիին համար պէտք եղած անունը անոր սիրաշունջը գերկէն կըրցած է ստանալ: Չափազանցութիւն չէ երբ ըստելի թէ կերպով մը հայը իր գոյութիւնը իր եկեղեցիին կը պարտի:

Այս իրողութիւնը պատճառ եղած է որ եկեղեցիի պաշտօնին մասին սխալ գաղափար մը սնուցանենք մեր մէջ: Եկեղեցին կը նշկատուի այնպիսի հաստատութիւն մը որուն զերագոյն պաշտօնն է պահպանել ազգութիւնը, անոր զրականութիւնը, պատմական յիշատակներն ու աւանդութիւնները: Անկրօնները, հոգեւոր արժէքներու հանդէպ անտարբերները և քաղաքական գործիչները եկեղեցիին մէջ տեսած են քաղաքական ազդակ մը միայն, և երբ իրենց կարծիքին համեմատ ան դադրած է այդպիսի ազդակ մ'ըլլալէ՝ աշխատած են զայն քանդել, իրր ալ

զոյութիւնը ֆառատկար մարմին մը:

Ներկայիս հայ մամուլին խոշոր մէկ մասին մէջ արտայայտուած զգացումներու և գաղափարներու տուն տուն մտայնութիւնն է այս: Հայ Առաք. եկեղեցիին է միայն ազգային եկեղեցին, իսկ միւս եկեղեցիներն են օտարազաւան և ոչ-ազգային կամ հակազգային. հետեւաբար անոնց պատկանողներն ալ նուազ հայեր են: Այս ծուռ մտայնութիւնը ազգութիւնն ու եկեղեցին իրարու հետ չփոթելու արգիւնքն է միայն:

Լեզուն և զրականութիւնը ազգի մը գոյութիւնը ապահովող մեծագոյն ազդակներէն են: Հայց. եկեղեցիին ծառայութիւնը այս մտքին մէջ անդնահատելի է: Հայերէն տառերուն զիւարէն գրիթէ ամբողջ մեր հին պատկառելի զրականութիւնը կը պարտինք Հայ Առաք. եկեղեցւոյ կղերականութեան. մինչև ժ.՝ զար շատ սակաւաթիւ աշխարհական գրողներու կը հանդիպինք: Ներկայիս Հայ Աւետ. եկեղեցին կը քննադատուի թէ ան հայ լեզուին և զրականութեան պէտք եղած օժանդակութիւնը չէ բերած, Աւետ. եկեղեցիին ծոցէն շատ քիչ թիւով զրական մշակներ յաւաք եկած են, թէ անոր զործածած հոգեւոր երգերուն բացարձակ մեծամասնութիւնը օտար հեղինակներու գործն է, մեծ մասով հայերէնի վերածուած օտարներու կողմանէ: Պէտք է անվերապահօրէն ընդունիլ թէ անոնց մէջ ճշմարտութիւններ կան:

Բայց երբ այս խնդիրը նկատի կ'առնուի պէտք է անտեսել սա երկու կէտերը:

Երբ զանազան ժողովուրդները Հրեայ միսիոնարներու միջոցաւ քրիստոնէութիւնը ընդունեցին անոնց միակ կրօնական գրականութիւնը կը կազմէին երբայական սուրբ գրութիւնները, որոնց ամփոփումն է Հին կրտսկարանը: Անոնք իրենց կրօնական հաւաքոյթներուն մէջ Սաղմոսները կ'երգէին, սորոնք օտար ցեղի մը հրաշակեալն են: Իսկ երբ Հայերը քրիստոնէացան երկար ատեն օտար լեզուներով կատարեցին իրենց ընթերցումներն ու ժամերգութիւնները, մինչեւ որ Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, գոյգ հանճարները, փրկեցին Հայ ժողովուրդն ու եկեղեցին Հայ տառերու գիւտովն ու Ս. Գրոց թարգմանութեամբը: Երեւոյթը ընդհանրական է, և միայն Հայ Աւետ. եկեղեցիին չի պատկանիր: Բայց պէտք է ըսել թէ այս երեւոյթը շարունակական ըլլալու է: Պէտք է տեսնել օտար գրականութիւնը, հոգեւոր երգերը մերժելու չափ ազգայնամուլ ըլլալ, բայց պէտք է միեւնոյն ատեն մեր ազգային գոհարները, հոգեշունչ երգերը անտեսելու չափ օտարամուլ ըլլալ: Երկրորդ՝ միշտ միտում մը կայ անտեսելու կամ թերգնահատելու Հայ Աւետ. եկեղեցիին կատարած ծառայութիւնը արդի աշխարհաբարը կազմելու մէջ: Աւետ. պարոյնները, բեմերը, մամուլը և իր թերութիւններով հանդերձ աշխարհաբար Ս. Գիրքը մեծապէս սատարեցին հայերէն աշխարհիկ լեզուն յղկելու, ձեւելու և ընդհանրացնելու մէջ: Եւ Բող. գրողներու հոյլը՝ թէպէտ քանակով փոքր՝ բայց օրակով արհամարհելի է երբեք:

Գրականութիւնը և ազգային գոյութեան պահպանումը եկեղեցիի մը գործունէութեան անուղղակի արդիւնքներն են. եկեղեցիի մը պաշտօնը էապէս կը կայանայ իր ժողովուրդը հոգեւորապէս սնուցանել, անոր բարոյական և հոգեկան ախտերը զարմանել, զայն առաջնորդել մարդկութեան գերագոյն և կատարելագոյն տիպին՝ յայտնուած Յիսուս Քրիստոսի մէջ: Եկեղեցիի մը պաշտօնն է տալ միջոց գործածել հոգեւոր արժէքները ուսուցանելու և տարածելու, կենդանի Քրիստոսին վկայելու: Ահա այն ատեն եկեղեցին փրկած կ'ըլլայ ժողովուրդը վատասեցումէ, կործանումէ:

Տ. Ճ. Ս.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Անհատներու ինչպէս նաև ազգերու ճակատագիրը բնորոշող և անոնց կեանքին ուղղութիւնը ճշգրտող ազդակը՝ կեանքի և Աստուծոյ մասին իրենց կաղամած գաղափարն է: Անշուշտ ասիկա չ'ենթադրել որ գաղափարը, փիլիսոփայութիւնը գերագասէ կեանքի: Ոտրհուրդներն ու գաղափարները կեանքի արտայայտութիւնը, կեղեւն են միայն. առանց կեանքի գաղափարները պարսպ հասկերու կը նմանին՝ որոնք քաղցած հոգիներու յազուրդ չ'են կրնար տալ:

Սակայն Աստուածային կեանքը մարդու մէջ իբր խորհուրդ, խօսք կ'արտայայտուի. «և բանն մարմին եղև ու բնակեաց ի մեզ»: Հետեաբար հոգ չէ թէ որքան բարի, ճշմարիտ ու գեղեցիկ է Աստուած՝ կեանքին սըխալ մրոնումը աղետարեր եղած է ու պիտի ըլլայ միշտ: Աստուած՝ արդարութեան արեւգալը՝ մարդկային մտքի պրիսմակէն անցնելով է որ կրնայ յայտնուիլ: Այնպէս որ մեր անձնականութիւններն են որ թոյր ու բոյր կուտան Աստուածային կեանքին, ինչպէս որ գունաւոր ապակիները գոյն կուտան արեւուն ձիւնափայլ ճառագայթներուն: Ահա թէ ինչո՞ւ Աստուծոյ գաղափարը, կեանքի ըմբռնումը լինել և չլինելու հարց մըն է մարդոց համար. նամանաւանդ Քրիստոնէական կրօնքին մէջ ուր մարդս Աստուծոյ մարմնացումն է. ուր ինչ որ Քրիստոնեան կ'ընէ ու կը խօսի, Աստուածն է որ ընել և խօսել կուտայ: «Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել, ինչպէս կը լսեմ այնպէս կը դատեմ.» կ'ըսէ Յիսուս. իսկ այս գիտակցութիւնը կրնայ մարդը կամ Յիսուսի նման կեանքի գերագոյն և բացարձակ արժէքները տեսնող ու գնահատող և իրապէս Վաստուած, յաւիտենական կեանքը մարմնացնող մէկը ընել, և կամ ինքզինքը անսխալական նկատողի մը և ունէ տալանդապաշտ Քրիստոնեայի նման մոլեռանդ հաւատաւորներէ և ոճրագործ մ'ընել:

Կեանքի գերագոյն և բացարձակ սկզբունքը Աստուծոյ արդարութեան խորհուրդն է: Երբ Աստուծոյ արդարութիւնը խախտի տիեզերքը տալիսովրայ կ'ըլլայ. անոր սխալ ըմբռնումը աշխարհը քառսի վերածել է և

կը վերածէ: Արդարութիւնը Աստուծոյ անշեղի բնութեան՝ որ է բացարձակ բարին՝ արտայայտութիւնն է Սիրոյ մէջ: Քրիստոնէութիւնը բացարձակ կրօնք մը, յաւիտենական կեանք մըն է անոր համար որ Աստուծոյ արդարութեան վրայ հիմնուած է: «Երանի անոնց որ անօթի ու ծարաւի են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան»: «Երանի անոնց որ հալածուած են արդարութեան համար, վասն զի երկինքի թագաւորութիւնը անոնցն է:» Աստուծոյ արդարութիւնը իր Հոգին է, Աստուած ինքն է, և Աստուած Սէր է:

Ահա թէ ի՞նչու համար խիստ կենսական, մահու եւ կենաց խնդիր մըն է Աստուծոյ արդարութեան ըմբռնումը: Այսօր քրիստոնեայ կոչուած ժողովուրդներու բացարձակ մեծամասնութեան պաշտփարը Աստուծոյ արդարութեան մասին՝ Քրիստոսէ 2000 տարի առաջ ապրող մարդոց գաղափարէն տարբերութիւն չունի: Երբ Աստուծոյ արդարութեան վրայ կը խօսինք կը հասկնանք վրէժխնդիր դատաւոր մը՝ որ բարեկերպ կը վարձատրէ և չարերը կը դատապարտէ մահուան: Նոր կտակարանը կարգաւ ե հասկնալ չենք գիտեր: Աչքի դէմ աչք, ակռայի դէմ ակռայ պահանջող Մովսիսականութիւն է տակաւին մեր կրօնքը:

Ո՛չ, Աստուած թէ՛ արդար և թէ՛ վրէժխնդիր չի կրնար ըլլալ: Անոր արդարութիւնը միայն Գողգոթայի Ոսէին վրայ կրնան տեսնուի: «Արդարեւ այս աշխարհը էր»: Այս հրաշագիտ, աստուածակերտ բառին մէջ առակ մըն է որ կը տեսնենք՝ ուր Աստուծոյ արդարութեան երկնափայլ ճառագայթները կ'ողողեն մեր սրտերը, կը շլացնեն մեր աչքերը: Արեւը շարժում, սէր, զոհողութիւն, կեանք է համակ, ուր որ երթայ հոն խաւարը կը փառատի, կեանքը կը գոյակերպուի, շարժում, յօրութիւն կ'ստեղծուի: Արեւը արեւ է անոր համար որ զոհողութիւն, սէր, կեանք է, հակառակ պարագային արեւ ըլլալէ կը դադրի: Արեւը չի կրնար ոչնչացնել, մեռցնել լոյսը՝ որ իր ծնունդը, ստեղծագործութիւնն է երկրի վրայ: Երբ պատուհանին փեղկը կամ դուռը կը գոցենք արեւուն դէմ արեւն է որ միշտ դուրս և մեր ներսը սառնացած նիւթի-րու վրայ կը խաչուի, կը գամուի, կ'արգի-

լուի ներս գալէ և այս ատեն է միայն որ արեւը, կեանքը մեր մէջ անզուսպ բողբոջը կ'ունենայ արեւուն՝ որ մեզմէ դուրս պատուհանին փեղկին վրայ գամուած, արգիլուած է:

«Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեալ» իր սրաբերուղի աղօթքով ներսն Շնորհալին թարգմանը կ'ըլլայ Նոր կտակարանի երկնատուր այն պատգամին թէ Աստուած Յիսուս Քրիստոսով լոյսը, արդարութեան արեգակն է տիեզերքի: «Ես եմ աշխարհի լոյսը», կ'ըսէ Փրկիչ Յիսուսը: «Աստուած լոյս է անոր մէջ խաւար չկայ», կ'աւելցնէ իր լուսածին աշակերտը Յովհաննէս: Աստուած լոյս է՝ խաւար չի կրնար ըլլալ, կեանք է՝ մահ չի կրնար ըլլալ, հայր է՝ վրիժառու դատաւոր չի կրնար ըլլալ: Ինքզինք չի կրնար հերքել. մարդը իր նմանութեամբ ստեղծեց, անոր մէջ իր հոգին, կեանքը գրած է. մարդը տիեզերքի գերագոյն արժէքը, արդարութիւնն է: «Դուք աշխարհի լոյսն էք» կը վկայէ Յիսուս: Աստուած չի կրնար մարդուն մէջ Ինքզինք, իր արդարութիւնը, կեանքը գատապարտել, մեռցնել. այդ պարագային Աստուած ըլլալէ կը դարձրի. մահ կ'ըլլայ:

Ոչ, Աստուած՝ մեզի նման, անպակաս և քարսիրտ փարիսեցիներու պէս վրէժխնդիր դատաւոր մը չէ. անիկա արդարութեան արեգակն է: Անհուն Սէր և միայն բարութիւն և զոհ հայրը հանգիստ չի կրնար ընել մինչև որ բոլոր մարդկութիւնը փրկուի: Աստուծոյ արդարութիւնը մեղաւորին փրկութեան մէջ կը կայանայ: Երբ կ'ուզենք ուղիղ և բացարձակ գաղափար մը կազմել Աստուծոյ մասին աչքերնիս Գողգոթայի բարձունքը դարձնենք և արդարադատ Մովսէսի ու Հոռովմայեցիին հետ ըսենք. «Արդարեւ այս աշխարհը էր»: Գաւիթի

Հ. Յ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

ԽՈՐՀԵԼՈՒ ԶՈՐՍ ԿԵՐՊԵՐԸ

Շատ անգամ մենք առերեսոյք պատրուակներ կուտանք մեր խորհածներուն և ըրածներուն համար, բայց քիչ անգամ կ'արտայայտենք անոնց բուն պատճառները: Խնդիրը ա՛յլ տեսիլ որոշ ձեւի մը վերածելով, կ'ըսենք. մեր ըրածներուն բուն պատճառները մեզի պատկանող բաները պաշտպանելու փափաքին մէջ կը կայանան: Մարդիկ ամենադի-

տունէն մինչեւ ամենատղէտը, բոլորն ալ բընականէն պահպանողական ծնած են: Մենք դիրաւ առերևոյթ պատճառ մը կուտանք մեր կաթոլիկ կամ Բողոքական ըլլալուն կամ մեր տեւէ ընկերութեան պատկանելուն համար: Բայց մեր տնոնցմէ տեւէ մէկուն պատկանած ըլլալուն բուն պատճառները բաւական տարրեր կրնան ըլլալ մեր տուած պատճառէն, քանի որ, մեր կաթոլիկ ըլլալուն պատճառը յաճախ մեր կաթոլիկ ըլլալն է:

Քրիստոնեայ մը դիւրաւ կը նշմարէ որ պուտտայական մը Պուտտայի հետեւորդ եղած չէ իր կրօնքը ամենալաւը գտած ըլլալուն համար, այլ ինք պուտտայական ծնողքէ մը սիրած ըլլալուն համար: Սակայն եւ այնպէս միեւնոյնը քրիստոնեան գաղաճանութիւն կը համարէ ինքն իր մասին խորհիլ՝ թէ ինքն ալ քրիստոնեայ մը եղած է ոչ թէ իր այդ կրօնքը ամենաճշգրիտ գտած ըլլալուն համար, այլ ինքն ալ իր կարգին քրիստոնեայ ծնողքէ սերած ըլլալուն համար: Վայրենի մարդ մը կրնայ քեզի ներկայացնել ամեն տեսակ պատճառներ պաշտպանելու համար իր այն գաղափարը թէ մարդու մը շուքին վրայ կոխելը վտանգաւոր է, բայց չի գիտեր թէ ինչո՞ւ կը պաշտպանէ իր անձնական գաղափարները:

Այսպէս, մեր հաւատացածներուն բուն պատճառները նոյնիսկ մեզմէ ծածկուած են: Քանի մեծանք, մենք կ'որդեգրենք այն բոլոր գաղափարները որ մեզի կը ներկայացուին մեր միջավայրին մէջ: Ահա այսպէս է որ կը կազմուին մեր գաղափարները կրօնքի, ընտանիքի, առեւտուրի, քաղաքացիութեան և հայրենիքի մասին: Անոնք շարունակաբար մեր ականջները կը լեցնեն: Այսպէս, տնոնց բոլորը ուրիշներէ ստացուած են եւ ոչ թէ մեր ուղիղ խորհելուն արդիւնքն են: Այս գաղափարները հարցութիւններ են թարկելու իրենց տիրոջ համար ծայրագոյն սկեպտիկութիւն է: Մենք մեր այս ուրիշներէ ժառանգած գաղափարները հարցութիւններ կը յանդիմանենք, իր տեսութիւնները անճշգրիտ կը նկատենք, և մինչեւ իսկ զինք մահուան կը դատարպարտենք: Ինչո՞ւ: Քանի որ մեր գաղափարներն են որ յարձակումի կ'ենթարկուին: Հետեւաբար, երբ մենք մեր միտքը կ'զբաղեցնենք այնպիսի գաղափարով մը ու-

րուն ուրիշի մը ակնարկելը անտեղի կը համարենք, բացորոշ կերպով յայտնի է թէ անիկայ ուրիշներէ սեփականացուած անորոշ գաղափար մ'է: Այն բոլոր գաղափարները որ մեր փորձառութեանց կամ մեր ուղեղին տրամաբանութեան արդիւնքն են, այնքան վստահութիւն չեն ներշնչեր մեզի որքան որ կ'ընեն մեր ուրիշներէ փոխ առածները:

Լաւ կը յիշեմ, երբ հայիւ պատանի մ'էի, որ մը խումբ մը առեւտրականներ կը վիճէին անմահութեան մասին: Ես սոսկալիօրէն բռնկեցայ, երբ անոնցմէ մէկը փափուկ կերպով մը իր տարակոյտը արտայայտեց այդ մասին: Երբ հիմա ետիս գտնեմ և քննեմ միեւնոյն բանը, կը տեսնեմ թէ այն ատեն ես, այդ նիւթին շուրջ բնաւ հետաքրքիր չ'ըլլալէ զատ, անոր մասին տեւէ փոքր տեղեկութիւն մ'իսկ չունէի: Սակայն չկրցան զիս արգիլել բարկանալէ, քանզի գաղափարս էր որ կը վտանգուէր:

Ահա այս տեսակ խորհելու կերպը կը կոչուի (RATIONALIZATION) պատճառաբանել, մեր համոզումները պահելու համար բանական պատճառներ գտնելու աշխատիլ: Այս տեսակ խորհիլն ալ չունի մեզ լուսաւորելու կարողութիւնը, քանզի այն մեզ խուզարկելու չի մղեր, այլ կը ձգտի մեզ պահել ինչպէս ո՞ր արդէն ենք:

Պատճառաբանել՝ ինքզինքնիս արդարացնել եւ երբեք կ'անբասանութիւն տեսնուի մը հետո:

Ինչ փոքրիկ բառը մարդկային գործունէութեանց մէջ ամենակարեւոր դերը կը խաղայ: Ուեւէ մի բանի առջեւ գետնադրուած, անիկայ գերբնական արժէք մը կուտայ անոր: Ինչ շունտ տեսիլ նշանակութիւն մը ունի քան պարզ շունտ, նոյնպէս ինչ տունս, ինչ հաւատաքըս, ինչ երկիրս, ինչ Աստուածս: Մենք ո՛չ միայն կ'ատենք մեր ժամացոյցին վրայով արկած եւսուիլը, այլ չենք ուզեր որ մէկը մեր հրատի ջրանցքներուն մասին եղած գաղափարներուն հակառակի: Փիլիսոփաներ, գիտնականներ, բոլորն ալ միեւնոյն փափուկ ըզգայնութիւնը կը ցուցնեն բոլոր այն բաներուն մէջ որոնք կը պարունակեն իրենց հայեցակէտերը: Միւսոն իր ամուսնալուծութեան մասին եղած զիրքը գրեց իր 17 տարեկան կնոջ հետ ունեցած դժուարութիւններէն մղուած և երբ զինք գատապարտեցին

իրը ամուսնալուծողներու պարագլուխ, ան իր ազնիւ ARES PAGITICA գրեց իր ուղածը խօսելու արտօնութիւնը ունենալը փաստելու համար: [Շարունակելի]

Բ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ
Հետեւողթմը. ԲՈՊԻՆՈՐՆԻ

ԻՆՉՊԷՍ ԲԱՐԵԿԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԸ

Աշխարհի բուն դժուարութիւնը կը կայանայ սա կէտին մէջ՝ թէ մարդիկ անսխալ կան եւ քաղաքական մարդին մէջ փնտռած են լուծումը, մինչդեռ ամէն անգամ աշխարհի հիւանդութիւնը ասկէ աւելի եղած է եւ պէտք է որ դարձան ալ խորունկ ըլլայ:

Մեր խառնաշփոթ աշխարհը շինած ենք մեր փառասիրութիւններէն, եսամոլութիւններէն, վախերէն, տաւալութիւններէն ու կասկածներէն, ազատութիւններէն եւ մրցակցութիւններէն: Եթէ երբեք կուզենք վերաշինել աշխարհը՝ պէտք է որ ամէն բանէ առաջ մեր ներքին սեփական հոգիներու վերակազմութեամբը սկսինք շինել զայն: Ամենակարեւոր առաջին քայլը որ պէտք է անել՝ մեր ներսիդին Աստուծոյ եւ մարդոց հանդէպ առողջ հաւատքի մը ստեղծումն է, մեզի վերապահուած եւ զերամառչելի եղող հոգեւոր ազրիւրներու համար յստակատեսութիւն մը եւ խորունկ վստահութիւն մըն է կեանքի եւ ոյժերուն վրայ անշշուկ:

Ո՛չ անտեսագիտութիւնը եւ ո՛չ ալ դիւանագիտութիւնը կրնան փրկել մեզ: Վասն զի բուն դժուարութիւնը հոս է որ մենք բնութեան ոյժերուն վրայ մեր իշխանութիւնը սխալ նպատակներու դորձածած ենք, եւ չենք կրնար լոկ գիտական նուաճումներու ընդլայնումով բարեկարգել աշխարհը, մինչեւ որ կեանքի խորունկ իմաստին մէջ գտնենք Զօրութիւն մը՝ որ մեզ կարող ընէ աւելի՛ ազէկ մարդիկ, աւելի՛ բարի սիրտ եւ ազնուազոյն շարժառիթներով օժտուած մարդիկ ըլլալու: Բ. Մ. Ճ.

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՆ ՍՐԺԷՔՆ ՈՒ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իրապէս Յիսուսի մարդկային անձնակա- նութեան արժէքին եւ կարելիութեանց հանդէպ ունեցած հայեացքը Արեւմտեան Ռոմ- կավարութեան ամենագլխաւոր ազրիւրներէն

մէկն է: Ռոմկավարութիւնը լոկ դիւանա- գիտութիւն, մեծամասնութեամբ ընտրու- թիւն, խորհրդարանով կառավարութիւն է: Անիկա նաեւ է այն համոզումը՝ թէ հառա- րակ մարդոց մէջ արտակարգ կարելիութիւն- ներ կան թաքուն, եւ եթէ պատեհութեանց դռները լայնօրէն բացուելու ըլլան ապշեցու- ցիչ արդիւնքներ յառաջ պիտի գան անբաղ- ցալի ազրիւրներէն: Շէյքսպիր սնանկացած մտազորմ եւ իր անունը գրել չգիտցող կնոջ մը գտեալն էր: Պէթովէն հիւժախտաւոր մօր եւ միայն ընտանեկան գործերու սահմա- նուած մօր մը որդին էր: Միքայէլ Ֆարա- տէյ ախոռի մը մէջ ծնաւ, որուն հայրը հաշ- մանգամ երկաթագործ մը եւ մայրը ստրկա- րար աշխատող մըն էր, եւ որ իր դաստիա- րակութիւնը Լօնտոնի փողոցներուն վրայ լը- րագիր ծախելով սկսած էր: Ֆրանսայի մէջ հանրաքուէով իրը ամենամեծ ֆրանսացին որ երբեք ապրած ըլլայ, ոչ թէ նափուէտնը ըն- տրիցին այլ Լուի Փոսթէօրը, զարուն բժշկու- թեան հեղինակը, որ իրադախտութի մը գաւա- կըն էր: Ժողովրդագիտութիւնը լոկ քաղա- քական սխալէմ մըն է: Անիկա բարոյական շարժում մըն է որ մարդկային կարելիութիւն- ներու վրայ արկածախնդրալի հաւատքէ մը կը բղխի:

Իրապէս այս ներհայեցութիւնը, տեսիլ- քը Յիսուսի մասնագիտութիւնն էր: Մարդ- կային անձնականութեան, անոր Աստուածա- յին ծագումին, հոգեւոր բնութեան, դերա- ղոյն արժէքին եւ անհուն կարելիութեանց գնահատումը, իրաւացիօրէն կոչուած է Ըս- տեղծագործ եւ ամենախնդնարուղի բաժինը որ ինք բերած է մարդկային խորհելակեր- պին:

Է. Ֆ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ԿԵԱՆՔԻ ՎՐԱՅ ԼՐՋՕՐԷՆ ԽՈՐՀԻ

Կարգ մը մարդիկ կեանքի մասին երբեք լրջօրէն չեն խորհիր, անոնք հաճոյքներու մասին կը մտածեն եւ երբեք չեն թափանցեր մակերեսէն ներս իրերու խորը: Սակայն խո- րապէս խորհող մէկու մը համար կեանքը սին հաճոյքներու շարք մը չէ:

Ճամբորդ մը՝ մի քանի օր Անդլէրը քա- ղաքին մէջ կը մնայ, եւ կը նկարագրէ թէ ի՞նչ-

պէս քաղաքին մէջ աշտարակին զանգակնե-
րը մեծ ազդեցութիւն մը ձգած էին իր վրայ։
Ջանգալները ամեն քառորդ ժամուն անդամ
մը օդը կը լեցնէին մեղմօրօք մեղեգիւի մը
քաղցր նօթերով, որոնք երաժշտութեան հըր-
ճուալի տարափի մը պէս երկինքէն վար կ'իջ-
նէին, հրեշտակային երգերու չափ անուշ եւ
սուրբ։ Եւ երբ ժամը կը լրանար, հեղասահ
արծաթէ նօթերու հոսանքին մէջ մեծ գան-
դակի ծանր հարուածները՝ խորունկ ծանր եր-
կաթեայ լեզուով մը միջոցը կը թնդացնէին,
եւ այս ուժգին ձայները կը լեցնէին զինքը
սոսկումի զգացումով մը։ Մինչ այն այսպէս
մտիկ կընէր ներգաշնակ հնչիւնին, պզտիկ ա-
նուշ զանգակներու մեղմ մեղեգիւն իրեն կը
յիշեցնէր Աստուծոյ զութն ու սէրը, և իւրա-
քանչիւր ժամուան լրանալուն հնչող լուրջ եւ
թաւ ձայները կը խօսէին արգարութեան,
դատաստանի և յաւիտենականութեան անար-
կու նիւթերու մասին։

Ահա Սուրբ Գիրքը կարգացող ամէն խոր-
հող անձ այսպէս կ'ազդուի։ Անոր սովորա-
կան լեզուն գոթ է, սէր կը հնչէ ամէն տեղ՝
հրեշտակներու երգերուն վանկերուն նման։
Իայց տեղ տեղ անհուն սիրոյ խօսքերուն մէջ
լսելի կ'ըլլան խորունկ ձայներ՝ որոնք կը խօ-
սին մեղքի դէմ բարկութեան և անարկու գա-
տաստանի օրունան մասին։

Նոյնը ճիշտ է կեանքի մէջ ալ, սովորա-
կան օրերը ուրախութեամբ կը սահին, ամէն
կողմ երաժշտութիւն կայ։ Մաղիկները կը
բացուին՝ սիրոյ ջահերը կը լուսաւորեն մեր
ճամբան։ Սակայն յանկարծ այս ուրախու-
թիւնն ու ծիծաղը կ'ընդմիջուին ծանր և խո-
րունկ ձայնով մը որ մեզ կ'ահարեկէ։ Կեան-
քը միշտ հրճուանք և ուրախութիւն չէ։ Հի-
մա իսկ անոր ենթաձայնը լուրջ է։ Մենք
խորհելու ենք որ յաւիտենականութիւնը շատ
մօտ է մեզի։ Դատաստանի ծանրակշիռ բա-
ները մեզմէ ծածկուած են մշուշի բարակ քօ-
ղով մը միայն։

Թարգ. Պ. ԼՕՇԽԱՃԵԱՆ

ՄԻ՝ ՄՈՌՆԱՐ ՎԱՅՆԱԾ ԲԱՐԻՔՆԵՐԴ

Ձիտուորական ուսանող մը իր կեանքը
յանձնած էր Յիսուսին։ Օր մը՝ երբնա շնոր-
հակալութիւններ կը մատուցանէր Աստուծոյ
իր ներուած մեղքերուն համար, դուռը դար-

նուեցաւ ուժգին, եւ ուսանողը դուռը բանա-
լու հազիւ քայլ մը առած էր երբ զնդապետ
մը ներս մտաւ։

«Ի՛նչ», ըսաւ նա, «Կ'աղօթե՞ս, եւ շա-
տոնց ձգեր եմ այդ սովորութիւնը։ Ինչ որ
կ'ուզեմ ունիմ, այնպէս որ Աստուծմէ խնդ-
րելիք բան չունիմ։»

«Լա՛ւ, տէ՛ր», կը պատասխանէ ուսանո-
ղը, «շատ բաներ կան որոնց համար պէտք է
որ շնորհակալ ըլլաս Աստուծմէ»։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՁԱՀԼԷԻ Ե. Ք. ՋԱՆԻՅ ՄԻՈՒԹԵԱՆ

ՍՄԱՌՈՒԱՆ ԳՈՐԾՆԷՈՒԹԻՒՆԸ

Ջահլէի Ե. Ք. Ջանից Ա. պետը Տ. Գ.

Մեսրոպեան։—Կը գրէ։

Տարիէ մը իվեր մենք ունեցած ենք հոս
Ե. Ք. Ջանից Միութիւնը, որը տեղւոյս մէջ
գտնուող ուրիշ քոյր երիտասարդական միու-
թեանց հետ իր նպաստը բերաւ ժողովուրդի
բարձրացման և երիտասարդութիւնը առաջ-
նորդելու յոյժ կենսական շարժումներու մէջ։

Ամառուան ամիսները Ջահլէի համար բա-
ձառիկ գործնէութեան շրջան մը կը բանան
թէ՛ հոգեւոր և թէ՛ ազգային կրկնակ տեսա-
կէտներէ։ հետեւաբար այս եղանակը մեզի հա-
մար արձակուրդ ըլլալէ աւելի գործունէու-
թեան և աշխատանքի ժամանակ մը կը հան-
գիստանայ։

Յուլիս 12էն իվեր Միութիւնն սկսած է
սարքել լսարանական հաւաքոյթներ, որոնք
տեղի կ'ունենան Եջ. գիշերները, ժամը 8.30-9
.30ին, մեր եկեղեցւոյ մէջ, գեղարուեստական
բաժինով մը և մասնակցութեամբ տեղս զըտ-
նըւող Հայ յայտնի մտաւորականներու. երկ-
սիս ունենդիրներու միջին թիւն է 150։

Յարանուանական, կուսակցական և հա-
կակրօնական նիւթեր չեն թոյլատրուիր, առ-
կէ զուրս մեր բեմը բաց է կրօնական, կըր-
թական, գիտական և առողջապահական նիւ-
թերու։

Յուլիս 12ին բանախօսեց Տիար Տիգրան
Խնդրունի, Ամերիկեան Համալսարանի այս
տարուան մանկավարժական ճիւղի շրջանա-
ւարտներէն. նիւթն էր «Բնագոյներ և անոնց
Դատախարակութիւնը»։

Յուլիս 26ի բանախօսն էր Հալէպ Գոլէճի
ուսուցիչներէն Տիար Փ. Տէր Պօղոսեան նիւ-

թըն էր «Հոգեկան գործունէութեան կերպերը»:

Օգոստոս 2ին, նիւթ ունենալով «Զինուպաշտութեան Չարիքները» բանախօսեց Միութեան ատենապետը:

Կը հաւատանք և կ'ազօթենք որ այս բանախօսութիւնները շատ մը երիտասարդներու մտային զարգացման և բարոյական ազնուացման ազդակներ ըլլան, հետեւին տանկելով ազնիւ գաղափարականներ և վեհ ներշնչումներ:

— Տիար Հ. Տարազեան Աթէնքի «Աքուլ ալ Բիլիճըն»ի մէջ մէկ տարի ուսանելէ վերջ ծառայողու վերադարձաւ իր նախկին քարոզչական պաշտօնը հոն շարունակելու համար:

— Տիար Յ. Հայտօսթեան Պիթիաս գնաց եւրիք ամսուան համար իբր քարոզիչ հոն պաշտօնավարելու համար:

— Այս տարի «Աքուլ ալ Բիլիճըն»էն Տիար Բ. Եղիաեան և Մ. Բէնճիլեան Աստուածաբանական ճիւղէն յետընթացաւարտի վկայականներ առած են: Օր. Ազնիւ Հէքիմեան ընկերային գործունէութեան և Տիար Պ. Յակոբեան կրօնական դաստիարակութեան ճիւղերէն տիպլոմներ առած են:

— Տիար Ս. Բէնճիլեան Պիթիասի Հայ Աւետ. համայնքի սերուած, յարգուած ազգեցիկ անգամներէն իր տանը մէջ իջուածքի մը արդիւնքին յանկարծամահ կ'ըլլայ, Յուլիս 25 ին: Մեր ցաւակցութիւնները հանգուցեալի բոլոր պարագաներուն:

— Վեր. Տ. Անդրէասեան, Յուլիս 30ին մուսնացաւ բնիկ Բիլիսցի և Ալիզիլէի Հայ Աւետ. գաղութի վարժուհիներէն Օր. Զարուհի Զաքարիա Տէտէհանի հետ: Պսակի արարողութիւնը կատարուեցաւ Ալիզիլէի Հայ Աւետ. եկեղեցիին սրահը, նոյն օրը գիշերուան ժամը 9ին, Վեր. Կ. Յարութիւնեանի կողմէ ընտրեալ և հոծ բազմութեան մը ներկայութեան: Երջանիկ օրեր՝ ամուսնացեալ ամուրին:

— Հիւժմատի Կոհ մը:— Օր. Աննա Սըվաճեան, գուտարը բնիկ Այնթապցի Տիար Գէորգ Սըվաճեանի, երկարատե հիւանդութենէ մը վերջ իր մահկանացուն կը կնքէ իր ծաղիկ հասակին մէջ, Օգոստոս 7ին: Մեր ցաւակցութիւնները հանգուցեալի բոլոր պարագաներուն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՀՈՎԻԻ ԱՂՋԻԿ ՄԸ ՓՐԿԱՐԱՐ ՓԱՐԻՋԻ

Չորս հարիւ տարի աւելոյ Հոռմէական գերիշխանութիւնը բոլորովին քաղաքակրթած էր անկախ և բարբարոս Կօլերը, որոնք իրենց կրցածին չափ կ'աշխատէին ճիշտ Հոռմայեցիներու պէս ըլլալ լեզուով և սովորութիւններով: Անոնք մեծ մասամբ Բրիտանիէութիւնը ընդունած էին. սակայն տակաւին հիթանոսներ ալ կային որոնք մեծ մասամբ լեռնաբնակներէ և գիւղացիներէ կը բաղկանային:

Ահա այս ժամանակներն էր որ կեղրոնական Եւրոպայէն բարբարոսներ խուժելով հրոյ ճարակ դարձուցին այս քաղաքակրթուած երկիրը: Անոնք անլսելի և անպատմելի զաւանային խժոժութիւններ կատարելով կործանեցին չորս հարիւր տարիներու աշխատանքին արդիւնքը: Այս յարձակումներու առթիւ Փարիզէն կէս ժամ հեռու գտնուող Նանթէր գիւղը հարուստ ընտանիքի մը մէջ ծնաւ աղջիկ մը՝ որ յորջորջուեցաւ Ժընէվիէվ: Օր մը երկու եպիսկոպոսներ այցելեցին Ժընէվիէվի գիւղը՝ երբ ան իօթը տարեկան էր: Նոյն իրիկուն գիւղին բոլոր բնակչութիւնը կ'աճապարէր դէպի գիւղին եկեղեցին, Ժընէվիէվ ալ անոնց հետ եղեմային ամմիդ հրեշտակի մը պէս փութաց դէպի հոն: Անոր գէմքը միշտ ժպտուն էր եւ գոզցեալ կը ցոլար գերդարձաթափայլ լուսինը: Երբ նա եկեղեցիէն ներս մտաւ անմիջապէս եպիսկոպոսին ուշադրութիւնը գրաւեց. վերջինը զարմանալով եւ հիանալով մանկան ջերմեռանդութեան վրայ գտն իր քովը կանչեց, իր քովը նստեցուց բոլոր եկեղեցական արարողութեան միջոցին. անոր հետ մտերմարար խօսեցաւ եւ ապա մետաղեայ խաչ մը կախեց անոր կուրծքին վրայ: Այս դէպքէն ետք նա ինքզինքը բոլորովին Աստուծոյ նուիրեց. երբ նա իր հօրը սչխարները կ'արածէր, եւ ծառի մը տակ նստած բուրդ կը մանէր անոնց վրայ հսկելով, իր սիրտը ազօթքով կը լեցուէր:

Բիչ վերջը եպիսկոպոսները մեկնեցան, բայց անոնցմէ Սուրբ Գերմանոս եղբէք չմոռ-

ցաւ ժընէվիէվի հրեշտակային ժպտուն դէմքը: Սակայն ահա՛, դժբախտութիւն մը պատահելով ժընէվիէվ կորսնցուց իր ծնողքը եւ մնաց որբ: Նա վիշտով լեցուն՝ իր կեանքը շարունակեց իր կնքամօր քով: Սակայն այս դժբախտութիւններու առթիւ ան հրքէք չյուսահատեցաւ, չմոռցաւ զԱստուած, որուն կ'աղօթէր իր բոլոր սրտով եւ անկեղծութեամբ կ'օգնէր իրմէ աւելի խելօճ եղող զբացիներուն:

Կօլերու երկիրը, ներկայ Ֆրանսան, 451 ին ահաբեկութեան եւ սոսկումի մահնաահռիկի վայրկեանները կ'ապրէր. քանզի Դանուր գետի ափերէն վայրենի Հոնիւր՝ առաջնորդութեամբ Աթիլայի՝ դէպի Փարիզ կը յառաջանային՝ կործանելով, կողոպտելով եւ գազանային խժոժութիւններ կատարելով իրենց ճամբուն վրայ: Արդէն անոնք կատարելապէս կործանած էին Թօնկրէս եւ Մէձքաղաքները: Փարիզ տապալակ վիճակի մէջ էր, ժողովուրդը կը սոսկար լսելով Հոնիւրու հրէշային անգթութիւնները:

Ժողովուրդը ահաբեկած կը լքէր իր հայրենիքը, տունն ու հարստութիւնը եւ կը փախչէր միայն իր կեանքը ապաստելու: Ժընէվիէվ այս վիճակը տեսնելով կայծակի արագութեամբ սուբաց Սէնի վրայ եղող այն կամուրջը ուրկէ ահաբեկած ժողովուրդը կը փախչէր: Երբ հոն հասաւ կամուրջին ծայրը կենտով պռապ. «Ո՛ր, մոլո՛րած ժողովուրդ, դարձէ՛ք, ապաշխարեցէ՛ք եւ աղօթեցէ՛ք Աստուծոյ, փոխանակ լքելու ձեր հայրենիքը եւ պաշտպանեցէ՛ք զայն: Մի՛ յուսահատի՛ք, յուսացէ՛ք այն Ամենակարողին որ յոյսի աղբիւրն է:» Ժողովուրդը արձանացած մնաց կամուրջին վրայ: Այս միջոցին կրօնական մը մօտեցաւ ժընէվիէվին, զայն ողջունեց, անոր նուէր մը տուաւ զոր Սուրբ Գերմանոս եպիսկոպոսը կը զրկէր: Ժողովուրդը տեսնելով պատկառելի եպիսկոպոսին յարգանքը այս աղջկան հանդէպ՝ մօտիկ ըրին անոր խրախուսական խօսքերուն եւ ողորումը եւ դարձան Փարիզ եւ սկսան զինուիլ պաշտպանելու համար իրենց Հայրենիքը: Աթիլա չկարողանալով յառաջանալ մինչեւ Փարիզ Օրլէանը կը պաշարէ: Այս միջոցին Հոսմայեցիք Գոթիւրու եւ Ֆրանքներու միանալով Շալօնի մօտ սոսկալի պարտութեան կը մատնեն Աթիլայի բանակը: Հետեւեալ տարին, 452ին, Աթիլա իր կատաղի վաշտերով Իտալիա կ'արշաւէ եւ հըրոյ ճարակ ընելով բոլոր հիւսիսային նահանգները յառաջացաւ չիտակ Հռոմ: Ոչ ոք կը յանգնէր դիմադրել անոր: Սակայն օրուան Պապը, Լէօ Բ. իշխանի մը ընկերակցութեամբ քաջութիւնը ունեցաւ դիմադրել Աթիլան: Անգէն եւ ալետոր Լէօն պատկառանք կ'ազդէ Աթիլայի զօրքերուն, որոնք զայն առաջնորդեցին իրենց պետին: Աթիլան անոր մօտիկ ըրաւ յարգանքով եւ որոշեց ետ դառնալ առանց լիւստելու Հռոմին: Սակայն ճամբան մեղաւ:

[Շարունակելի]

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Եկեղեցիի Պաշտօնը

Տ. Ժ. Խ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Աստուծոյ Արդարութիւնը

ՊԱՏ. Հ. Յ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Խորհեղա Չորս Կեդիւրը Բ. Ա. ԺէՊէժեԱՆ

Մարդկային Կեանքին Արժեքն ու

Կարեւորութիւնները

Է. Խ.

Լեզուի Բարեկարգել Հասցիքը

Բ. Մ. Ժ.

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

Կեանքի վրայ Լրջօրէն Խորհի ԹԱՐԳՄ. Պ. Լ.

Մի՛ Մոռնա՛ր Վայելած Բարիքներդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱԻԵՏԱԲԵՐ

Կրօնարարական, Գիտական, Կրթական երկչաքաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու Տնօրէն, Տ. Ժ. Խրդիւհան

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 ԼՂԶիտ

Արտատահման » » 1 Տօլար

Հասցէ—

NOR AVEBAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE